Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ
23.06.2015թ. թիվ 176-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

_____

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) արագ արձագանքման հանձնախմբի **(այսուհետ՝ Հանձնախումբ)** կազմավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները:

1.2. Հանձնախումբը հասարակական հիմունքներով գործող մարմին է, որը՝

ա) արձանագրում է փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացման խոչընդոտման դեպքերը կամ փաստաբանի նկատմամբ այլ անօրինական գործողությունները (**այսուհետ, նաև՝ Դեպք**).

բ) նպաստում է փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանների լիազորությունների իրականացման խոչընդոտները վերացնելուն:

2. Հանձնախումբը

2.1. Հանձնախումբը կազմված է համակարգողից և անդամներից: Հանձնախմբի անդամների քանակը չի սահմանափակվում:

2.2. Հանձնախմբի համակարգողին երկու տարի ժամկետով նշանակում է Պալատի նախագահը:

(ենթակետը փոփոխվել է Պալատի նախագահի 18.04.2016թ. թիվ 122-Լ որոշմամբ)

2.3. Հանձնախմբի անդամներին նշանակում է Հանձնախմբի համակարգողը՝ իր գործունեության ժամկետով:

2.4. Հանձնախմբի աշխատանքները կազմակերպում է Հանձնախմբի համակարգողը:

2.5. Հանձնախմբի համակարգողը՝

- ապահովում է Հանձնախմբի բնականոն գործունեությունը, այդ թվում՝ կազմակերպում է Հանձնախմբի անդամի կամ անդամների այցը Դեպքի վայր, ինչպես նաև այդ կապակցությամբ համագործակցում է լրագրողների հետ.
- սահմանում է Դեպքի արձանագրման համար անհրաժեշտ ձևաթղթերը.
- Հանձնախմբի անունից հայտարարություն է տարածում Դեպքի վերաբերյալ.
- Դեպքի վերաբերյալ գրավոր տեղեկացնում է Պալատի նախագահին և Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի համակարգողին.
- Դեպքին առնչվող փաստաբանի խնդրանքով տրամադրում է համապատասխան տեղեկանք Դեպքի վերաբերյալ.
- յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև հաջորդ ամսվա 15-ը Պալատի նախագահին է ներկայացնում հաշվետվություն՝ հաշվետու ժամանակահատվածում արձանագրված Դեպքերի և իրականացված միջոցառումների մասին:

2.6. Հանձնախմբի գործունեության համար անհրաժեշտ միջոցներն ապահովում է Պալատը:

2.7. Հանձնախմբի համակարգողի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

- իր դիմումի հիման վրա.
- փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցվելու կամ դադարեցվելու դեպքում.
- Պալատի նախագահի որոշմամբ:

2.8. Հանձնախմբի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնում է Հանձնախմբի համակարգողը՝ սույն կարգի 2.7 կետում նշված հիմքերով:

3. Դեպքերի արձանագրումը

3.1. Պալատի կայքէջում հրապարակվում է Հանձնախմբի համակարգողի և անդամների հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները:

3.2. Դեպքի վերաբերյալ փաստաբանի ահազանգով, Համակարգողը կամ անդամն անհապաղ մեկնում է դեպքի վայր և արձանագրում Դեպքը: Դեպքն արձանագրելիս համակարգողը և/կամ անդամը կարող են կիրառել տեխնիկական միջոցներ:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունիսի 23-ից:

4.2. Սույն կարգը կարող է փոփոխվել կամ լրացվել Պալատի նախագահի որոշմամբ:

* * *